ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ
(ԸՍՏ Ս. ՎՐԱՅՅԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ)

Արշակ Բալյան

1874 թ., Էջմիածնի վանքին կից, ընդարձակ հողի վրա, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ իր ձեռքով հիմք դրեց մի դպրոցի, որն իր անունով կոչվեց Գևորգյան ճեմարան։ Իր ժամանակի համար փառավոր էր ճեմարանի շենքը, որի համար Կաթողիկոսը ոչինչ չխնայեց։ Թուրք կառավարության արտոնությամբ Սողանլուի հռչակավոր անտառից բերել տվեց խոշոր գերաններ, գործի կանչեց անվանի վարպետներ։ Ինքն անձամբ հսկում էր շինության վրա։ Ասում էին, որ հատակագիծն էլ էր պատրաստել իր ձեռքով։

Հիրավի, իր ժամանակի համար հոյակապ էր Գևորգյան ճեմարանը։ Վաղարշապատ գյուղից դեպի Երևան տանող մեծ պողոտայի վրա, վանքի արևելյան կողմը, պարտեզի մեջ, արևմուտքից արևելք երկարող, բարձրանում էր սրբատաշ քարերից կարմիր ներկված երկհարկանի մի շենք, որի ներսը լայն միջանցքով բաժանում էին երկու շարք լուսավոր դասարաններ։ Շենքի մեջտեղը, հարավային մուտքի վրա, տեղավորված էր հոյաշեն գմբեթը, ճեմարանի համբավավոր սրահը, ուր տեղի էին ունենում ճեմարանի հանդեսները։ Այստեղից հարավային պարտեզի վրա նայող լայն պատուհաններից, երևում էր վեհափառ Մասիսը իր ամբողջ հասակով։ Այստեղ, այս սրահում, Մասիսին նայող դաշնամուրի առջև նստած՝ Կոմիտասը հորինում էր իր անմահ երգերը։

Սրահի ճակատին կախված էր Գևորգ Դ յուղաներկ մեծ նկարը։ Նրանից քիչ հեռու բազմած էր Խրիմյան Հայրիկը՝ ծխախոտից դեղնած բեխերով։ Մի քիչ այն կողմ էր Այվազովսկիի նշանավոր նկարը՝ «Նոյը իջնում է Արարատից» և մյուս կողմը՝ Թադևոսյանի «Էջմիածին» նկարը, Հիսուսը իջնում է երկնքից Էջմիածնի հիմքը դնելու նպատակով։

Սրահի առջև, միջանցքում, ամեն առավոտ, դասերից առաջ, երկու շարքով կանգնում էին ճեմարանի երկու հարյուր աշակերտները առավոտվա աղոթքը երգելու համար՝ «Առավոտ Լուսո» և երեկոյան՝ «Հրեշտակ Զվարթուն»։ Միջանցքի արևելեան ծայրը տեսչարան-ուսուցչարանոցն էր, իսկ հյուսիսային կողմը՝ սերտարանը և ընդարձակ մատենադարանը՝ 40 000 գրքերով ու պարբերականներով։

Ճեմարանի գլխավոր մուտքը նայում էր դեպի հյուսիս՝ Վաղարշապատ գյուղի վրա։ Հյուսիսային պարտեզում կանգնեցվեց Գամառ Քաթիպայի պղնձե

կիսանդրին։ Վարդագույն տուֆե պատվանդանի վրա գրված էր հայրենաշունչ բանաստեղծի կտակը.

Կյանքիս մեջ մի հատ սին փառք ունեցա,
Սուրբ Էջմիածնում թաղվել ցանկացա,
Սիրական իմ ազգ, թե Աստված սիրես,
Այս իմ մեկ հատիկ իղձը կատարես։

Ամեն օր ճեմարանը սննդով պահովում էր 250 աշակերտների, վերակացուների և սպասավորների։ Հայրիկի կաթողիկոսության օրոք, սպասավորները, վանեցի էին, նրանց մեջ նշանավոր էին Նախո բիձան, գիշերապահը, և Հայրոն՝ մեր երևելի խոհարարը։ Գայանեի վանքում պահվում էին ճեմարանի կովերը, որոնց կաթը երբեմն աշակերտներին էլ էր բաժին ընկնում։

Այսպիսի տնտեսություն վարելու համար ճեմարանն ուներ հատուկ պաշտոնյա, պր. Մեսրոպը, որը ճեմարանի հոգածությամբ տնտեսվարական կրթություն էր ստացել Օդեսայում։

Ճեմարանի ելևմուտքը տարեկան 50 000 ռուբլի էր՝ 25 000 դոլար, որը փոքր գումար չէր այն օրերի համար։ Այդ գումարի մեծագույն մասը հոգում էր վանքը, փոքր մասը գոյանում էր թոշակներից։ Շուրջ 200 աշակերտից հազիվ 10-15 հոգի կրթավարձ էր վճարում։ Մյուսները ձրիավարժ էին։

Պետք է ասել, որ նյութական տեսակետից, ճեմարանը լավ էր կազմակերպված։ Աշակերտների սնունդը ընդհանրապես բավարար էր, բացի պաս օրերից. չորեքշաբթի և ուրբաթ, շաբաթական պասեր, մեծ պաս՝ յոթ շաբաթ, պարտադիր բոլորը պահվում էին անխտիր և ի մեծ դժգոհություն աշակերտների։ Պաս օրերի կերակուրներն էին. առավոտյան՝ մի պնակ խաշած կարմիր լոբի և մի բաժակ թեյ հացով։ Կեսօրին՝ մախոխ, ոսպի կամ լոբիի ապուր ու խաշած գետնախնձոր. երեկոյան՝ դրա նման մի բան։

Պատմությունը վկայում էր, որ ճեմարանի բոլոր ցույցերն ու հեղափոխությունները սեղանատնից էին սկսվում...

Գևորգյան ճեմարանը, կրթական ծրագրի տեսակետից, բաժանվում էր երկու մասի. 1) Վեցամյա միջնակարգ դպրոց և 2) Եռամյա լսարաններ։

Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների չորրորդ դասարանը հաջողությամբ ավարտողները ընդունվուն էին ճեմարանի առաջին դասարանը։ Ճեմարանի դասարանական բաժինը իր ծրագրով համապատասխանում էր թեմական դպրոցների կամ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ծրագրին, միայն ճեմարանում ավելի ուժեղ էին հայագիտական առարկաները և, իբրև օտար լեզու, ռուսերենից բացի, սովորում էին գերմաներեն և հին հունարեն։ Ճեմարանի դասարա-

նական բաժինն ավարտողը ստանում էր համապատասխան վկայական և, իբրև միջնակարգ դպրոց ավարտած, իրավունք ուներ Հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում պաշտոնավարելու կամ քահանայության աստիճան ստանալու և կամ Եվրոպական բարձրագույն դպրոցներում ուսումը շարունակելու։ Ռուսական համալսարաններ ընդունվելու համար պետք էր գիմնազիայի կամ ռեալական դպրոցի քննություն հանձնեին։

Ճեմարանի դասարանական բաժինը ավարտողների մի մասը դուրս էր գալիս և մտնում էր գործնական կյանքի ասպարեզ՝ իբրև ուսուցիչ, քահանա, ազգային հասարակական հաստատություններում պաշտոնյա և այլն, մյուսները շարունակում էին իրենց ուսումը երեք տարի ևս՝ լսարանական բաժնում։

Ճեմարանի լսարանները, կարելի է ասել, եռամյա բարձրագույն դպրոց էր, մի տեսակ համալսարան։ Նման հաստատություն մենք չենք ունեցել ուրիշ ոչ մի տեղ։

Լսարանական բաժնում դասավանդվում էին հետևյալ առարկաները.

ա) Հայոց լեզու, աշխարհաբար և գրաբար, քննական,

բ) Հայոց պատմություն, քննական,

գ) Մատենագիտություն և գրականություն,

դ) Փիլիսոփայության պատմություն,

ե) Հոգեբանություն,

զ) Տրամաբանություն,

է) Մանկավարժություն,

ը) Հայոց եկեղեցական իրավունք։

Գևորգյան ճեմարանում, իբրև տեսուչ կամ ուսուցիչ, տարբեր ժամանակներում, պաշտոնավարել են բազմաթիվ բարձր մտավորականներ, ինչպես Մաղաքիա Արք. Օրմանյան, երբ դեռ վարդապետ էր, Գարեգին վարդ. Հովսեփյան, ապագա Կիլիկիո Կաթողիկոսը, բազմահմուտ գիտնական Կարապետ վարդապետ Տեր Մկրտիչյանը, երաժշտագետ Կոմիտաս վարդապետ, մանկավարժ Սեդրակ Մանդինյանը, Ստեփանոս Պալասանյանը, Կարապետ Կոստանյանը. Մանուկ Աբեղյանը, Մինաս Բերբերյանը, Հրաչյա Աճառյանը, Հակոբ Մանանդյանը, Սիրական Տիգրանյանը, Հովհաննես Հովհաննեսյանը, Լեոն, Ե. Տեր-Մինասյանը, Ա. Տեր-Պողոսյանը և բազում ուրիշներ։

Գևորգյան ճեմարանը, որպես կրթական հաստատություն պատմական մեծ դեր կատարեց Հայ ժողովրդի ազգային կյանքի բոլոր ասպարեզներում։ Կարելի է հիշել բազմաթիվ անվանի ճեմարաններ՝ հոգևորական, գիտնական, գրող, լրագրող, արվեստագետ, հասարակական գործիչ, հեղափոխական և, իհարկե, ուսուցիչ։

Գրող, բանաստեղծ. Ա. Ահարոնյան, Լ. Շանթ, Ա. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Ա. Բակունց, Լեո Կամսար, Գ. Քալաշյան։

Հասարակական-քաղաքական գործիչ. Ա. Վռամյան (Օ. Դերձակյան), Ա.-Գյուլխանդանյան, Ռ. Տեր-Մինասյան, Ա. Ջամալյան, Ա. Մռավյան, Ս. Թորոսյան, Ա. Միկոյան, Խ. Կարճիկյան, Ա. Խոնդկարյան, Յ. Տեր-Հակոբյան (Իրազեկ), Արտակ Դարբինյան, Ա. Միքայելյան։

Կրթական գործիչներ. Ա. Տեր -Պողոսյան, Ա. Շավարշյան, Գ. Էգիլյան, Ա. Բարսեղյան, Վ. Հախնազարյան։

Երաժշտագետներ. Կոմիտաս, Ս. Մելիքյան։

Ճեմարանական, արևելյան իրականության մեջ, նշանակում էր, ուսյալ, բազմակողմանի հայագետ, ազգային գաղափարներով տոգորված և ազգին ծառայելու պատրաստակամ մտավորական։ Անուրանալի է ճեմարանի լուսավորիչ և հեղաշրջիչ դերը հայ կյանքի բոլոր բնագավառներում։

«Եթե ես կյանքումս որևէ մի լավ բան եմ արել Հայ ժողովրդի համար, այդ ամենը պարտական եմ ճեմարանին, ուր կազմավորվեց իմ նկարագիրը, ուր ես կարողացա խորացնել իմ մտավոր զարգացումը, ձեռք բերել սեփական աշխարհայացք, լայնացնել մտքիս հորիզոնը»,- տարիներ անց գրում է ճեմարանի շրջանավարտ Ս. Վրացյանը[1]*։*

Էջմիածինը գտնվում է Արարատյան դաշտի սրտում, իսկ Արարատյան դաշտը՝ Մասիսի և Արագածի հովանու ներքո, Հայաստանի սիրտն է՝ հարուստ ամեն քայլափոխին պատմական հուշարձաններով և պատմական հիշատակներով։ Այստեղ էին, ավերակների տակ, հայ հին քաղաքակրթության հետքերը, Հայոց պանծալի մայրաքաղաքները, հայ ժողովրդի անցյալ փառքը հիշեցնող հուշարձանները, նշանավոր ուխտավայրերն ու վանքերը. Էջմիածին, Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ, անդին Գեղարդ, Խորվիրապ, Օշական, Զվարթնոց, որն այն ժամանակ դեռ ծածկված էր թանձր հողով։ Ավելի հեռու՝ Հառիճը, Հաղպատը, Սանահինը և պերճաշուք Անին՝ սգավոր, Սևանը, ուր դեռ պայքարը հին և նոր աստվածների միջև չէր վերջացած, Տաթևն իր պատմական անապատով և շարժական սյունով…

Էջմիածնից դեպի հարավ՝ Սուրմալուն և Կողբը, ուր բանաստեղծ ժողովուրդը շարունակում էր ստեղծագործել երգեր։ Մասիսից և Բարթողյան լեռնաշղթայից այն կողմ՝ Ավետյաց երկիրը՝ նույնպես հարուստ պատմական փառավոր անցյալով, ազգային հիշատակարաններով, ուր հայ ժողովուրդը տառա-

---

[1] **Սիմոն Վրացյան** (Կենսագրական գիծեր), տե՛ս «Բագին», ամսագիր գրականության և արվեստի, Բեյրութ, 1969, № 7, էջ 42-43։

պում էր անօրեն Թուրքի լծի տակ՝ ազատություն երազելով։ Ուր հայ քաջերը արյուն էին թափում հերոսական կռիվներում։ Շատերն էին իրենց արյունը խառնել նրանց արյան հետ՝ Սասունի ազատության համար։

Ճեմարանը ապրում էր իր սեփական մթնոլորտով։ Ըստ Ս. Վրացյանի Ճեմարանի աշակերտության համար որոշակի նշանակություն ունեին միջավայրն ու մթնոլորտը[1]։ Խոսքերով դժվար է պատկերացնել այդ մթնոլորտը, որ անշոշափելի էր, բայց զգացվում էր միշտ և ամեն բանի մեջ։

Մեծ ուսուցիչ Ռոստոմն ասում էր. «Կանգնեցրեք շարքով տասը հոգի և ես, դեմքերին նայելով, կասեմ՝ սա դաշնակցական է, սա հնչակյան է, սա՝ պահպանողական։ Թե Աստվածդ սիրեք, մի հարցնեք, թե ի՞նչն է դրանց հատկանիշը...»։

Ճեմարան ընդունվելու հաջորդ օրն իսկ հանդերձապահ վարպետը ամբողջովին փոխում էր աշակերտի հագուստը։ Ճեմարանն ուներ իր տարազը՝ Գևորգ Դ կողմից հաստատված. կապտավուն մահուդե բաճկոն և անդրավարտիկ և մշեցիների քոլոզի մեջտեղը բռնող մի ֆես և, իբրև վերարկու՝ հոգևորականի սև սքեմ։ Ամառ-ձմեռ այդ էր ճեմարականների հագուստը։

Յուրաքանչյուր դասարան իր կազմով կարելի էր համարել Ճեմարանի մանրանկար պատկերը. աշակերտներ կային հայաբնակ համարյա բոլոր շրջաններից՝ Արարատյան դաշտից, Կարսից, Ախալքալաքից, Քութայիսից, Գանձակից, Ղարաբաղից, Զանգեզուրից, Դարալագյազից, Գողթնից, Սալմաստից, Ղազոինից, Վասպուրականից, Տարոնից, Եռզլաթից, Նոր Նախիջևանից և այլն։

Կոմիտասի շնորհիվ դասարանը հաճախ դասերից հետո կամ տոն օրերին պտույտի էր գնում Վաղարշապատի այգիները, մոտիկ գյուղերը կամ Արարատյան դաշտի հետաքրքիր վայրերը։ Այդ պտույտները՝ Կոմիտասի ընկերակցությամբ, ոչ միայն հաճելի զբոսանք էին, այլև մի տեսակ դաս Հայոց պատմության և Հայաստանի բնության մասին։ Այս պտույտները կոչվում էին «դիտական արշավ»։

Ծննդյան և Զատկի տոներին ճեմարանցիները ավելի մեծ, դիտական արշավներ էին կազմակերպում դեպի Տաթև, Զանգեզուր, Հառիճ, Անի և այլն։

Ճեմարանի հարուստ մատենադարանը աշակերտների տրամադրության տակ էր։ «Ես ունեի այն առավելությունը, հիշում է Ս. Վրացյանը,- որ շուտով նշանակուեցի մատենադարանապետի օգնական, հետեւաբար, ամէն գիրք ու պարբերական մատչելի էր ինձ. եւ ես ագահութեամբ լափում էի ամէն բան։ Կարող եմ առանց չափազանցութեան ասել, որ ճեմարանում ես կարդացել եմ բոլոր հայ մատենագիրների գործերը, գրեթէ բոլոր հայ հեղինակների երկերը, հայ

---

[1] **Ս. Վրացեան,** «Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ», հատ. Բ, Պեյրութ, 1960, էջ 46։

պարբերական մամուլի մեծ մասը - «Հիւսիսափայլ», «Արծիւ Վասպուրականի», «Փորձ», «Արձագանք», «Մուրճ», «Լումայ», «Մշակ», «Նոր Դար», Պոլսի, Իզմիրի եւ Մխիթարեան հրատարակութիւնները, եւ այլն։ Վերջին տարիներին յափշտակութեամբ կարդում էինք եւ յեղափոխական հրատարակութիւնները, մանաւորապէս «Դրօշակ»ը»[1]։

Հայերեն հրատարակությունից բացի ընթերցանության առարկա էին կազմում նաև ռուս և եվրոպական գրականությունն ու մամուլը։

Հայ հեղինակներից ամենից ուժեղ ազդեցություն է ունեցել Րաֆֆին, որի վեպերը ճեմարանում վերընթերցվում էին մի քանի անգամ։ Րաֆֆին այսօր էլ շարունակում է մնալ հայ ամենամեծ գրողներից մեկը։

Ընթերցանությունից բացի ճեմարանցիները ժամանակ էին գտնում և՛ գրելու և՛ վիճելու համար։ Ճեմարանցիները նշանավոր վիճաբանող էին։ Նրանց մասին հեգնանքով ասում էին. «Գնանք լճի ափ, վիճենք»։ Ներսեսյան լիճը, ինչպես և կողքի Ներսես Աշտարակեցու տնկած անտառը, նրանց զբոսանքի սիրած վայրերն էին, ուր հաճախ լսվում էին իրար հետ վիճաբանող ճեմարանցիների բորբոքած ձայները։ Ի դեպ՝ Ներսեսյան լիճը նաև վանքի միաբանների տեսակցության վայրն էր՝ Վաղարշապատի կանանց և օրիորդների հետ։

Ճեմարանի ուսուցիչները, մի՞թե կարելի է մոռանալ նրանց, այնքան նվիրում, այնքան սեր ու գուրգուրանք էին ցույց տալիս դեպի ճեմարանը և ճեմարանի աշակերտությունը։ Նույնիսկ տեսուչ Կարապետ Կոստանյանը, որից ճեմարանցիները վախենում էին և աշխատում էին աչքին չերևալ, նույնիսկ այդ դաժան համարված մարդը, ինչպես վերջը պարզ դարձավ, ամբողջ սրտով կապված էր ճեմարանի և աշակերտության հետ։

Տարիների հեռավորությունից ավելի խոր ու բազմակողմանի կերպով արժևորելով Գևորգյան ճեմարանի խաղացած դերը ոչ միայն իր անձնական կյանքում, այլև 20-րդ դարի հայ մշակույթի ու գիտության զարգացման գործում՝ Ս. Վրացյանը եզրակացնում է. «Եթե ի նկատի ունենանք դասախոսների որակյալ կազմը, այլև հարուստ մատենադարանը և առատ ընթերցանությունը, հասկանալի կլինի, որ ճեմարանի լսարաններից դուրս էին գալիս բազմակողմանի և խորունկ զարգացման տեր երիտասարդներ, որոնց համար գործը ապահովված էր հայ մշակույթի, կրթական և հասարակական ասպարեզներում»[2]

---

[1] **Ս. Վրացեան,** «Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ», հատ. Բ, Պեյրութ, 1960, էջ 51։

[2] Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 388։

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ
(ըստ Ս. Վրացյանի հուշագրության)

Արշակ Բալյան

Բանալի բառեր՝ *Գևորգյան ճեմարան, կրթական, Ս. Վրացյան, հոգևոր, կաթողիկոս, ճեմարանական, ազգային, Էջմիածին, հայագետ, մտավորական*

Հիմնվելով Ս. Վրացյանի հուշագրության վրա, հոդվածում ներկայացվում է նրա ճեմարանական կյանքը սովորելու ընթացքում:

Գևորգյան հոգևոր ճեմարանը հիմնադրվել է 1874 թ. Ս. Էջմիածնին կից տարածքում Գևորգ IV ամենայն հայոց կաթողիկոսի կողմից, կրում է նրա անունը: Հոդվածում նկարագրվում են ճեմարանի գտնվելու վայրը, կառույցը, ինչպես նաև առօրյան, սնունդը, դասընթացների ընթացքը, ծրագիրը և ուսուցանվող առարկաները:

Հոդվածում կարևոր նշանակություն է տրվել մեթոդական և գեղարվեստական գրականության, ինչպես նաև ճանաչողական էքսկուրսիաների անցկացմանը ճեմարանում՝ ոչ միայն մերձակա տեսարժան վայրերի, այլև ուխտագնացությունների, պատմամշակութային վայրերի, վանքերի և եկեղեցիների այցելությամբ:

Նշվում է հատկապես այն մեծ դերակատարությունը, որ ունեցել է Գևորգյան հոգևոր ճեմարանը ոչ միայն հայ հոգևորականության կրթության և կայացման գործում, այլև ընդհանրապես հայ ժողովրդի հոգևոր և մշակութային հարստացման, որի բազմաթիվ զավակներ անցել են հենց այդ «գիտության դարբնոցով»:

ДУХОВНАЯ СЕМИНАРИЯ ГЕВОРГЯН

Аршак Балян

Ключевые слова: *Духовная семинария Геворкян, образовательный, духовный, католикос, семинарист, национальный, Эчмиадзин, Симон Вртацян, арменовед, интеллигенция*

Семинария была основана в 1874 г. на территории усадьбы Первопрестольной церкви Эчмиадзина Католикосом всех армян Геворгом 4-ым и названа его именем.

В статье описаны расположение, внешний вид семинария, организация обучения. Представлены внутренний уклад - питание, быт, время учебы, программы и предметы обучения. Подчеркивается особое значение, которое придается здесь наличию методической и художественной литературы, проведение познавательных экскурсий, поездок не только в близлежащие достопримечательности, но и более дальные, значимые места исторической эпопеи, паломничества, храмы и церкви.

Отмечается большая роль, которую сыграла Духовная семинария в просвещении и становлении не только армянского священства, но и вообще в развитии и обогащении духовной и культурной жизни армянского общества, многие видные сыновья которого прошли через эти “кузницу знаний”.

GEVORGIAN SPIRITUAL SEMINARY

Arshak Balyan

Keywords: *Gevorgian Seminary, Simon Vratsyan, Etcmiadzin, spiritual, Catholicos, educational, Armenologist, intellectual, seminarian, national*

The Seminary was founded in 1874 on the estate territory of Etchmiadzin cathedral by the Catholicos of All Armenians Gevorg IV and was named after him.

The article gives both the description of the location, the exterior appearance of the building and the organization of education there. It also gives the description of inner organization like catering, mode of life, schedule, curricula and the subjects taught . The article emphasizes the fact what significant role was allocated to the presence of methodological literature and fiction, to organization of cognitional excursions, tours to both nearby and far away sites of interest and monuments of history as well as pilgrimage to churches and monasteries.

The article considers the enormous role that the spirituai Seminary has played in the process of education and the formation of not only the Armenian Clergy but also the development and enrichment both the spiritual and cultural life of the Armenian society. A lot of outstanding Armenians have passed through that great smithery of education.